ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

GEORGE GASCÓN
ՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

da.lacounty.gov @LADAOffice @LACountyDA

Ատելության Հանցագործություններ

Կալիֆորնիայի օրենքը սահմանում է ատելության հանցագործությունը որպես հանցավոր գործողություն կամ բռնության իրականսպառնալիք անձի կամ մի խումբ մարդկանց նկատմամբ, որի ժամանակ տուժվածները կամ տուժված կողմերը թիրախ են դառնում իրենց իրական կամ ենթադրյալ ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային ծագման, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման սեռական կողմնորոշման կամ հաշմանդամության պատճառով:

Ատելության հանցագործության մեջ որևէ մեկին մեղադրելու համար պետք է ապացույցներ լինեն, որ կողմնակալությունը, ատելությունը կամ նախապաշարմունքը էական դրդապատճառ են հանդիսացել հանցագործության կատարման մեջ:

Հետևյալ գործողությունները Կալիֆորնիայի օրենսդրության համաձայն ատելության հանցագործությունների օրինակներ են, եթե տուժողը օրինականորեն պաշտպանված խմբի անդամ է կամ ընկալվում է որպես անդամ.

- Հավանաբար ընդգրկված լինելով օրինականորեն պաշպանված խմբում, անհատը թիրախ է հանդիսանում ցանկացած հանցագործության մեջ, ներառյալ գույքային հանցանքների, ինչպիսիք են՝ գողությունը կամ վանդալիզմը:
- Ուժի կիրառում կամ ուժ գործադրելու սպառնալիք՝ անձին վիրավորելու, վախեցնելու կամ խոչընդոտելու վերջինիս սահմանադրորեն երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացմանը, ինչպիսիք են եկեղեցի կամ դպրոց հաճախելը, քվեարկելը, հասարակական վայրերում ազատ տեղաշարժը կամ սեփական տանը ապահով լինելը
- Անձին վախեցնելու կամ նրա՝ սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունը խոչընդոտելու նպատակով՝ գույքի ոչնչացում կամ վնասում:
- Պղծել կրոնական խորհրդանիշը կամ սվաստիկա պատկերել այլ անձի սեփականության վրա՝ ահաբեկելու նպատակով
- Եկեղեցու, սինագոգի, մզկիթի կամ այլ պաշտամունքի վայրի վանդալիզմ, այրում կամ ոմբակոծում՝ ահաբեկելու նպատակով
- Այլ անձի սեփականության տարածքում պարանի օղակ կախելը՝ իմանալով, որ այն խորհրդանշում է կյանքի սպառնալիք և նպատակաուղղված է տարածքիսեփականատիրոջն ահաբեկելու համար, ներառյալ դպրոցները, պուրակներն ու աշխատավայրերը
- Առնչություն անձի կամ խմբի հետ, որն ունի այս իրական կամ ընկալվող հատկանիշներից որևէ մեկը

Խոսքի Ազատություն, Թե՞ Ատելության Հանցագործություն

Մեր հասարակության մեջ մենք երբեմն հանդիպում ենք ատելության խոսքի և վարքագծի՝ արտահայտված ռասայական կամ էթնիկ հայհոյանքների, կրոնական վիրավորանքների կամ գեյերի դեմ հաղորդագրությունների ձևով, որոնք մարդիկ տեղադրում են համացանցում, բղավում քաղաքական հանրահավաքների ժամանակ կամ զայրացած արտահայտվում փողոցում առճակատման ժամանակ, օրինակ՝ ճանապարհային երթևեկության ընթացքում բռնկված վեճի ժամանակ: Բայց միայն նման հայհոյանքները, վիրավորանքները կամ ատելությամբ լցված հայտարարությունները ատելության հանցագործություն չեն համարվում:

Խոսքի ազատությունը պաշտպանված է Միացյալ Նահանգների Սահմանադրության առաջին փոփոխությամբ, նույնիսկ երբ այն կարող է պարունակել ատելության կամ հրահրող գաղափարներ: Այսպիսով, չնայած այն կարող է վիրավորել և վախեցնել մարդկանց և համայնքներին, հանցագործություն չի համարվում, երբ խոսում կամ գրում ես բառեր, որոնք քարոզում են ատելություն և մոլեռանդություն: Այնուամենայնիվ, այն խոսքը, որը պարունակում է անհատի կամ խմբի նկատմամբ բռնության իրականսպառնալիք, համարվում է հանցագործություն:

Ատելության դեպքերը դրանք ատելությամբ լցված խոսքեր կամ գործողություններ են, որոնք միգուցե չեն հասնում մինչև հանցագործության մակարդակի, բայց, այնուամենայնիվ դեռևս վիրավորական են, քանի որ թիրախավորված անձը կարող է իրեն տուժված զգալ:

Դատել Ատելության Հանցագործությունների Համարodio

Կալիֆորնիան ունի մի շարք օրենքներ, որոնք կոնկրետ վերաբերվում են ատելության հանցագործություններին: Այս հանցանքները կարող են պատժվել որպես զանցանք կամ հանցագործություն՝ կախված արարքի խորության/խստության աստիճանից: Որոշ հանցագործություններ, որոնք սովորաբար պատժվում են որպես զանցանք, կարող են որակվել որպես հանցագործություն, եթե դրանք ատելության դրդապատճառ ունեն: Հանցագործությունների համար դատապարտումները, որոնցում ատելությունը էական դրդող գործոն/ դրդապատճառ է հանդիսացել, կարող են պատժելի դրույթներ ունենալ, որոնքստանդարտ պետական բանտային պատժաչափին ավելացնում են ևս մեկից-չորս տարի:

Ծառայություններ Տուժվածների Համար

Շրջանային Դատախազության Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրոն հասանելի է Լոս Անջելես շրջանի դատարաններում և ոստիկանական բաժանմունքներում՝ օգնություն տրամադրելու հանցանքից տուժվածներին, ովքեր վնասվածքներ են ստացել կամ վերջիններիս սպառնացել են վնաս հասցնել: Բյուրոյի ներկայացուցիչները (VSRs) աջակցություն և ռեսուրսներ/աղբյուրներ են տրամադրում տուժվածների անվտանգությունը ապահովելու, և խորհրդատուների օգնությամբ հանցանքից տրավմա ստացած անձանց աջակցելու համար:

Օգնել Հանցագործության Տուժվածներին Վերապրել

Լոս Անջելեսի Շրջանային Դատախազության Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրո
da.lacounty.gov/victims

(800) 380-3811

Տուժվածների համար Ծառայությունների Բյուրոյի ներկայացուցիչները բացի այն, որ օգնում են տուժված կողմերին ֆինանսական փոխհատուցումների ձեռք բերման գործում, վերջիններս նրանց և իրենց ընտանիքներին տրամադրում են նաև ճգնաժամային միջամտության ծառայություններ և անհրաժեշտ ուղղորդումներ, աջակցում են պաշտպանական հրամանների ձեռք բերման հարցում, ուղեկցում են նրանց ողջ դատական գործընթացում, օգնում են հրատապ կացարանի/ապաստանի, սննդի, հագուստի հարցում, ինչպես նաև Կալիֆորնիայի Տուժվածների Փոխհատուցման Խորհրդից փոխհատուցում ստանալու համար դիմումների լրացման գործընթացում:

Բռնության կամ բռնության սպառնալիքի տուժվածները, որոնք զեկույց են կազմել ոստիկանությունում, հնարավոր է, որ իրավասու լինեն փոխհատուցում ստանալու Կալիֆորնիայի Տուժվածների Փոխհատուցման Խորհրդի միջոցով ՝ հանցագործության հետ կապված կորուստների և ծախսերի համար, ինչպիսիք են աշխատավարձի կորուստը և բնակության վայրի տեղափոխումը, բժշկական և խորհրդատվության ծախսերը:

Անձնակազմի անդամները կարող են աջակցել տուժվածներին տարբեր լեզուներով: Կա՛պ հաստատեք Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրոի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ **(800) 380-3811**.

Տեղեկություններ Առանց Փաստաթղթերի/ Չգրանցված Տուժվածների և Գոյատևողների Համար

Տուժված կողմից չի պահանջվում ունենալ օրինական ներգաղթի կարգավիճակ՝ ծառայություններից օգտվելու համար: Համաձայն դաշնային օրենսդրության, առանց փաստաթղերի/չգրանցված որոշ տուժվածներ, որոնք ենթարկվել են զգալի ֆիզիկական կամ մտավոր բռնության, իրավասու են դիմել “U” ոչ ներգաղթային կարգավիճակի վիզայի համար (U Visa): Տուժածներին “U” և “T” վիզաների հայտադիմումների լրացման գործընթացում աջակցող տեղական, շահույթ չհետապնդող գործակալությունների ցանկին ծանոթանալու համար, խնդրում ենք այցելել մեր վեբկայք: **da.lacounty.gov/victims/uvisa/uvisa-tvisa-assistance-agencies**:

Ատելության Հանցագործությունների Զեկուցում

Եթե դուք ատելության հանցագործության տուժվածն եք կամ ականատեսը, կարևոր է, որ հանցագործության մասին տեղեկացնեք իրավապահ մարմիններին: Օգնության համար զանգահարե՛ք Ձեր տեղական իրավապահ մարմիններին: **Արտակարգ իրավիճակի դեպքում, անմիջապես զանգահարե՛ք 911:**

Զանգահարե՛ք **211** ատելության հանցագործությունները, ատելության գործողությունները և բուլիինգի դեպքերը հաղորդելու/զեկուցելու, տեղեկացնելու համար, որոնք տեղի են ունեցել Լոս Անջելեսի շրջանում՝ անկախ նրանից, թե այդոք հանցագործություն տեղի է ունեցել:

Որտեղ Դիմել Օգնության Համար

Լոս Անջելեսի Շրջանի Մարդկային Հարաբերությունների Հանձնաժողով
(213) 738-2788

Զրպարտության Դեմ Պայքարի Լիգա
(310) 446-2000

Ասիացի-Ամերիկացիների Առաջադեմ Արդարադատություն
(213) 977-7500

Լոս Անջելեսի Ներգաղթյալների Մարդու Իրավունքների Կոալիցիա
(888) 6CHIRLA ((888) 624-4752)

Լոս Անջելեսի Համասեռամոլների Կենտրոն
(800) 373-2227

Մահմեդական Հանրային Կապերի Խորհուրդ
(323) 258-6722

Գունավոր Մարդկանց Առաջընթացի Ազգային Ասոցիացիա
(310) 397-1171

Հարավասիական Ցանց
(562) 403-0488

Սկանավորե՛ք այստեղ՝ այս բրոշյուրն առցանց դիտելու համար: